

268

355.01


Ա-78

15538

ՊԱՏԵՐԱԶՄ
ՉԵՆՔ ՈՒԶՈՒՄ

ԲԱՅՑ

ԴԻՄԱԴՐԵԼՈՒ
ՊԱՏՐԱՍՏԵՆՔ



Ս ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՈՍԿՎԱ

1927

355

Ա-79

ՅԱ. ԱՎԻՆՈՎԻՅԿԻՅ և Վ. ԶԱՐԶԱՐ

355
Ա. 79

ՊԱՏԵՐԱԶՄ ԶԵՆՔ ՈՒԶՈՒՄ,
ԲԱՅՅ
ԴԻՄԱԴՐԵԼՈՒ ՊԱՏՐԱՍՏ ԵՆՔ

Կազմեց՝ Մ. Ա.

1003
13029

4393

4393

9

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՈՐՈՒԹՅՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ.—1927

2010

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄԵՐ
ԿՈՒՎԸ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ
ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ԴԵՄ:

Այս տարվա նոյեմբերի 7-ին լրանում է Հոկ-
տեմբերյան Հեղափոխության տասը տարին: Հոկ-
տեմբերի 25-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 7-ին),
սրանից տասը տարի առաջ, տապալվեց թագա-
վորի գահի պաշտպան կալվածատերերի և բուր-
ժուազիայի իշխանությունը մեր յերկրում, վորը
յերկրագնդի մեկ վեցերորդ մասն է կազմում:
Ֆաբրիկաները, գործարանները, բանկերը և յեր-
կաթուղիները, հողն ու անտառները, հանքերն
և ուրիշ հարստություններն անցան խորհրդային
պետության ձեռքը:

Մեր հարևանները՝ բուրժուական կապիտալիս-
տական յերկրները չկարողացան և չէին ել կա-
րող սառնասրտությամբ նայել մի հսկայական
յերկրի տարած հաղթանակին, վորի արևելքը պետք
է վաղ թե ուշ զիպչի նրանց ու վերջ տա նրանց
իշխանությանը:

2001
84334-
834-91

Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Յապոնիայի կապիտալիստները զրկվեցին իրենց դաշնակից Ռուսաստանից (վերջին մեծ պատերազմին ընդդեմ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Տաճկաստանի և Բուլղարիայի)։ Տեսան, վոր իմպերիալիստական պատերազմին արգելք են լինում խորհրդային յերկրի բանվորներն ու գյուղացիները։ Մեր թշնամիները կորցրին իրենց կապիտալները, գործարանները, գավոդները, ածխահանքերն ու յերկաթուղիները, վորոնց տերն եյին թագավորի որով. նրանք չբավականացան տասնյակ միլյոնավոր սպանված, վիրավորված ու հաշմանդամ դարձած զոհերով։ Անգլիայի, Ֆրանսիայի, Յապոնիայի և Ամերիկայի բուրժուազիան, իրեն սգնական դարձնելով Չեխո-Սլովակիան, Լեհաստանը և այլ մանր պետություններ, 14 պետությունների կողմից կազմակերպված մի հսկայական հարձակում սկսեց բանվորների և գյուղացիների խորհուրդների դեմ։

Յերեք տարի տեեց մեր կռիվը ընդդեմ ինտերվենցիայի (միջամտության), ընդդեմ այն կռվի, վոր մեր դեմ գինված ուժերով մղում եյին իմպերիալիստական պետությունները ցարական զենքերալների և նրանց գործակալների հետ միասին։ Այդ յերեք տարվա ընթացքում խորհրդային պետության բանվորն ու գյուղացի-

ցին անձնվիրությամբ պաշտպանում եյին իրենց հոկտեմբերյան նվաճումները։

Դրա հետևանքն յեղավ այն, վոր սպիտակ գվարդիական զենքերալներ՝ Կրասնովի, Կալեդինի, Կորնիլովի, Դենիկինի, Յուդենիչի, Միլլերի, Դուտովի, Կոլչակի և Վրանգելի վոհմակները ջարդվեցին, վոչնչացվեցին և Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի, Յապոնիայի, Չեխո-Սլովակիայի ու Լեհաստանի զորքերը դուրս վոնդվեցին խորհրդային յերկրից։ Հանրապետությունը մաքրվեց հակահեղափոխության մնացորդներից և նրա տականքներից (Անտոնով, Մախնո, Պետլուրա դաշնակ մաուգերիստներ)։

Ամբողջ պետությունը՝ Մեծ-Խաղաղ ովկյանոսից սկսած մինչև արևմտյան սահմանները, Սև ծովից մինչև Չինաստան ու Սառուցյալ ովկյանոսը—ազատագրվեց։ Յեվ վերջապես 1921 թվին խորհրդային հանրապետությունը կարողացավ անցնել խաղաղ շինարարության։

ԽՍՀՄ-ի ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՆ ԱՎԵԼԻ ՅԵ ՈՒԺԵՂԱՆՈՒՄ։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԺԱՆԴԱՐՄԻ ԴԵՐՈՒՄ.

Այդ բոլոր արշավանքների և հարձակումների կազմակերպողը մեր դեմ՝ խորհրդային պետու-

թյան դեմ՝ անգլիական իմպերիալիզմն եր՝ թե առաջ և թե հիմա:

Ամբողջ յերկրագնդի մայր ցամաքները մի չորրորդ մասը իր թաթի տակ դրած՝ նա ճգմում ե Հնդկաստանի, Յեգիպտոսի, Աֆրիկայի ու Ավստրալիայի ժողովուրդներին, ամենափոքր ազատագրական շարժումը ճնշում ե, հարձակվում ե չինական մեծ հեղափոխության վրա և այդպիսով ամբողջ աշխարհի իսկական ժանդարմն ե դարձել:

Յերբ 1918—19 թվականներին նրա քիթը ջարդվեց մեր դեմ կովեկիս, յերբ տեսավ, վոր զոռով բան չի կարող անել, իրա կապիտալիստներին առաջ քաշեց և 1921 թվի մարտի 16-ին առևտրական համաձայնություն կնքեց Սորհրդային պետության հետ: Այդ բանին եյին սպասում մնացյալ մեծ ու փոքր պետությունները, և այնուհետև, միմիանց հետևելով՝ մեկը մյուսի յետևից մեր յերկրի հետ համաձայնության գալու ճանապարհը բռնեցին:

Ինչ ասել կուզի, վոր Անգլիան հանգիստ չուներ, և այդ դրությունը յերկար չտևեց: Անգլիական կառավարությունը 1923 թվի մայիսի 8-ին Սորհրդային կառավարությանը հանձնում ե Կերզոնի հայտնի նոտան (հայտագիրը): Այդ նոտայում ուլտիմատումի ձևով ներկայաց-

վում ե մի շարք անհիմն և վիրավորական պահանջներ, ի միջի այլոց՝ պահանջվում ե հատուցումն՝ անգլիական լրտես Դեվիսոնի գնդակահարման, և անգլուհի կին գրող կասկածելի Ստեն-Գարդինգի բանտարկման համար: Դրա հետ միաժամանակ անգլիական կառավարությունը իր նավատորմն ե ուղարկում Բալթիկ, Սև և Սպիտակ ծովերի ջրերը: Լորդերի և կապիտալիստների կառավարությունը պահանջում եր Սորհրդային կառավարությունից՝ յետ կանչել Պարսկաստանից և Ավղանստանից իր ներկայացուցիչներին՝ ընկ. ընկ. Շումյացկուն և Ռասկոլնիկովին, պահանջում եր, վոր Սորհրդային պետության բանվորներն ու գյուղացիները դադարեցնեն իրենց հեղափոխական, «հակաանգլիական» պրոպագանդը:

Դրա պատասխանն յեղավ այն, վոր աշխատավոր մասսաները սեղմեցին շարքերը՝ Սորհրդային իշխանության և Կոմունիստական կուսակցության շուրջը: Միլիոնավոր բանվորների և գյուղացիների շարժումը ստեղծեց Ողանավի Բարեկամների Ընկերությունը և հզոր ուղղական ոգանավատորմի կառուցումը՝ «Ուլտիմատում» անունով, ու հիմք դրեց մի շարք այլ ողանավատորմների:

Բանվորներն ու գյուղացիները ամբողջ աշ-

խորհին ցույց տվին, վոր իրենք պատրաստ են իրենց բոլոր միջոցներով պաշտպանել իրենց պետութիւնը:

Վերջին ժամանակները խորհրդային Միութեան բանվորներն ու գյուղացիները ակնատես յեղան մի շարք այնպիսի անսովոր դեպքերի, վորոնք իրենց բնույթով վկայում են, վոր համաշխարհային բուրժուազիան կատաղի արշավանք ե սկսել պրոլետարական զիկտատուրայի յերկրի դեմ:

Չան-Չո-լինի հարձակումը Պեկինում՝ մեր դեսպանատան վրա, մեր հյուպատոսարանի պաշարումը Շանհայում, մեր բանկի վրա կատարած հարձակումը նույն քաղաքում, հանդուգն սրիկայական ուղտիմատումները՝ կեղծիքների վրա հիմնված, ավազակային հարձակումը Լոնդոնի մեր առևտրական ներկայացուցչության վրա և յերկրի ներսում կատարած մահափորձերը, հրդեհածգութիւնների ու պայթեցման փորձերը, — այս ամենը այդ արշավանքի ամբողջական շղթայի առանձին ողակներն են:

ԽՍՀ Միութեան ներկայացուցիչ ընկեր Վոյկովի սպանութիւնը Լեհաստանում ռուս սպիտակ զվարդիականի ձեռքով տեղի ունեցավ հարաբերութիւնների խզումից անմիջապէս հետո. դա միթե պատերազմի նախաբան չեր: Իզուր չե վոր հենց ինքը բուրժուազիան հայտարարում ե,

թե «Չեմբերլենը վառված ջահը ձեռքին պտտում ե վառողի տակառների շուրջը» և վոր հարաբերութիւնների խզումից հետո «մնացել ե միայն պատերազմի վորոտալից նետը ձգել»:

Յեւ վերտեղից են սկիզբ առնում և ունենում մատն ե խառն այս բոլոր սրիկայութիւնների մեջ, ի հարկե Լոնդոնից և ի հարկե Անգլիայի մատն ե խառն այս ամենի մեջ:

Ինչո՞ւ հենց Լոնդոնի, — հարց կտա ընթերցողը:

Հապա ուն հայացքներն են հառած մեր սոցիալիստական շինարարութեան վրա, ով ե դայրութիւն վրտում մեր հաջողութիւնները և սարսափում այն բանից, վոր ահա տասը տարի շարունակ մի հսկա յերկրի ազատագրված բանվոր ու գյուղացի ժողովուրդը ապրում ե՝ առանց իր հին ճնշող տերերի, առանց կալվածատերերի, խաների ու բեկերի և կապիտալիստ աղաների կարտոր քաշելու. առաջին հերթին՝ անգլիական սարսափում ե իմպերիալիստական կառավարութիւնը:

Խորհուրդների Յերկիրը, վոր դեպի իրեն ե գրավել Անգլիայի կողմից ճնշված ու ստրկացած ժողովուրդների և ազգերի համակրանքն ու սերը, իր զարգացման, աճման և ամրացման որինակով վարակում ե Արևմուտքի բանվոր դասակարգին ու Արևելքի աշխատավոր մասսաներին, և անգլիական կապիտալիզմի դիտավորութիւնների

ճամբան ե կտրել ու նեղն ե ձգել նրան:

Մեր հեղափոխության որինակից վարակվել են բրիտանական տիրակալության ամենազգայուն մասերը—առաջին հերթին Չինաստանն ու Հոնկոնգը: Չինաստանը—մի կիսագաղութ ե Անգլիայի համար: Չինաստանի հեղափոխությունը Անգլիային զրկում ե գաղութային արդյունաշահումից ե սպառնում ե շարունակել յերեքհարյուր միլիոն ժողովուրդ ունեցող Հնդկաստանի կողմը: Իսկ Հնդկաստանը (վոր իզուր չեն անվանել «անգլիական թագի մարգարիտ») հեղափոխվելուց հետո, Անգլիան պետք ե իր մահվան յերգը յերգի:

Այ թե վորտեղից ե ծագում կատարի ատելությունը դեպի Սորհրդային Միությունը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՊՐՈՎՈԿԱՅԻՈՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ.

Ընթերցողը հիմա հարց կտա—«Ինչո՞ւ համար ե տարվում այդ պրովոկացիոն քաղաքականությունը, ինչո՞ւ Անգլիայի հետադիմականները նոր պատերազմ են պատրաստում մեր դեմ, զինում Միություն հարևան մանր պետություններին՝ Լեհաստանին, Ռումինիային ե այլոց մեր դեմ. ե ինչո՞ւ հենց վերջերս նրանք սկսեցին բացաշխարհ արշավանք՝ Սոցիալիստական Սորհրդային Հան-

րապետությունների Միություն դեմ, ե վոչ թե մի յերկու-յերեք տարի առաջ»:

Ահա թե ինչու.

Անգլիական իմպերիալիզմը ձգտում ե շտկել իր խանգարված գործերը իր յերկրի ներսում ե գաղութներում: Մեր դեմ մղած կռվի առաջին շրջանում (1917—21 թվականներին) կորցնելով անագին միջոցներ ու ժամանակ, ե այդ կռվում պարտվելով, նա մի հույս ուներ—«խաղաղ պայմաններին անցնելով, սովետները չեն կարողանա տնտեսությունը վերականգնել, այդ բանը նրանց ուժերից վեր ե, նրանք չեն կարող մանավանդ սոցիալիզմին անցնել: Նրանք սովից կմեռնեն (1922 թվին), լիթվությունից կըկործանվեն (1923, 24 թ. թ. առատ բերքը), նրանք անցնում են կապիտալիստական վերածննդի շրջանը», ե այլն ե այլն:

Դրանից հետո Անգլիան համաշխարհային շուկան ձեռքից բաց թողեց. նրա տեղը բռնեցին Հ.Ա.Մ.Ս.Ս.Ս. Միացյալ Նահանգները. այդ ել բավական չեք. նա տեսնում եր, վոր իր յերկրի ներսում, իր քթի տակ՝ բանվորները ավելի հեղափոխական են դառնում, ձախանում են (ընդհանուր գործադուլը, հանքափորերի գործադուլը 1926 թվին). անգլիական իմպերիալիզմը ավելի յեր կատաղում Սորհրդային աշխատավորական յերկրի դեմ:

Յեւ վայժմանը տեսան, վոր իրենց հաշիվները ջուրն ընկան: Նրանք մեզնից լավ են տեսնում մեր գյուղատնտեսութեան և արդյունաբերութեան հաջող զարգացումը, և վոր սոցիալիզմի շինարարութեան ընդհանուր պլանը մենք զործնական կերպով իրականացնում ենք: Անգլիայի բուրժուազիան տեսնում է, վոր իր յերկրի բանվորներն ել են ուշի ուշով հետևում մեր շինարարութեան հաջողութիւններին՝ բուրժուազիայի խնամքի կարոտը չգալով: Ահա սա յե, վոր նրան առիթ է տալիս դիմելու կռիւ իր հին միջոցներին ու ձեերին (պատերազմ և ինտերվենցիա), հույս ունենալով, վոր այդպիսով յեթե չի վոչընչացնի ԽՍՀՄ-նը, գոնե կխանգարի նրա աճումն ու զարգացումը:

Կվերականգնի կալվածատերի իրավունքը, գործարանները կանցնեն բուրժուազիային, կվոչընչացնել տա ութժամյա բանվորական օրը, վոր իրենց մօտ վաղուց է վոչնչացրած. ահա թե ինչ է նրա նպատակը:

Անգլիական իմպերիալիզմը յերազում է արյան ծովի մեջ խեղդել հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին, մեր հսկա յերկիրը տաժա՛նակիր բանտ դարձնել, մեր յերկիրը, վոր դեպի սոցիալիզմ է գնում համառ ու համոզված:

Ի պատասխան Անգլիայի՝ ԽՍՀՄ-յան դեմ ու-

նեցած ռազմական պատրաստութեան, մեր կառավարութիւնը վարել և վարում է խաղաղութեան քաղաքականութիւն:

Մենք պրովոկացիայով չտարվեցինք վոչ անցյալ տարի, յերբ Չան-Չուինը հարձակվեց Չին-Արեւելեյան յերկաթուղագծի վրա, և վոչ ել այն դեպքում, յերբ մեր ներկայացուցչութիւնների վրա հարձակում կատարեցին Պեկինում և Լոնդոնում, յերբ Անգլիան խախտեց տարրական իրավունքներն այն պայմանագրի, վորի տակ ինքն եր ստորագրել:

Մենք կռոււմ ենք խաղաղութիւնը պաշտպանելու համար, և այդ պայքարում մեր թե՛ կոմունիստական կուսակցութիւնը և թե՛ կառավարութիւնը սառնասիրտ և ինքնազուսպ տարան բոլոր սուր մոմենտները, վորովհետեւ մենք խաղաղութեան հետապնդում ենք հանուն մեր սոցիալիստական շինարարութեան իրականացման, հանուն բանվորների և գյուղացիների բարորութեան:

Քանի՜ դեպքեր են յեղել, յերբ մեր Միութեան կառավարութիւնը իր պատրաստակամութիւնն է հայտնել քննելու ամեն մի լուրջ առաջարկ, վոր թեթևացնելու յե ժողովուրդների ռազմական ծախքերի ու միջոցների բեռը:

Հիշենք Ճենովայի կոնֆերենցիան (1922 թ.), յերբ մեր յերկիրը առաջինն եր, վոր իր ամբողջ

ծավալով դրավ ընդհանուր գինաթափման հարցը: Այնուհետև, նույն թվի աշնանը Խորհրդային կառավարութունը հարևան պետություններից հրավիրեց մի խորհրդակցութուն, վորտեղ դրավ շատ կոնկրետ և ըստ ամենայնի իրադրժեկի առաջարկներ՝ պատերազմական լուծը թեթևացնելու համար: Մեր յերկրի խաղաղասիրական մտադրությունները դժբախտաբար այդտեղ ել աջակցության չհանդիպեցին:

Մենք կրճատեցինք մեր կարմիր Բանակը, մինչդեռ մյուս պետությունները հրաժարվեցին պակասեցնել իրենց բանակը և ավելի զինվեցին, քան պատերազմից առաջ եր:

Իսկ թե յերբ տեղի կունենա բացարձակ հարձակումը մեզ վրա, — ճիշտ ժամանակը վորոշել չի կարելի: Պարզ ե այն, վոր մեր թշնամիները ջանք են թափում այդ ժամը շտապեցնելու: Այդ պատրաստությանն ե, վոր մենք պետք ե պատասխանենք ինքնապաշտպանության նախապատրաստությամբ:

«ՄԵՐ ՊՍՏԱՍԽԱՆԸ ՉԵՄԲԵՌԼԵՆԻՆ»

Իմպերիալիստական թալանչիների պրովոկացիաներին մեր լայնածիր Միության բազմամիլիոն պրոլետարիատն ու գյուղացիութունը պատասխանում են՝ մեր յերկրի ինքնապաշտպանու-

թյան ամրապնդումով: Նրանք հոծ մասսաներով ԽՍՀՄ Պաշտպանության և Ոգնավային քիմիական շինարարության Ընկերության բարեկամների շարքերն են մտնում: Այդ ընկերությունը՝ ՊԱՋԸ-Ավիաքիմը (ՈՍՈ-Ավիաքիմը) ստվարացնում ե իր շարքերը, բազմամիլիոն մասսաները ստեղծում են մեր կարմիր Բանակի, նավատորմի և ողանավատորմի տեխնիքական միջոցների ամրապնդման մի մեծ ֆոնդ՝ «Մեր պատասխանը Չեմբեռլենին» անունով:

Արթուն, զգաստ, աչալուրջ լինել — սա յե Խորհրդային Միության աշխատավոր մասսաների լոգունգը:

Յերբ 23 թվին Չեմբեռլենի նախորդը՝ լորդ Գերզոնը ներկայացրեց իր հանդուգն ուլտիմատումը, աշխատավոր մասսաները նրան պատասխան տվին «Ուլտիմատում» ողանավային եսկադրիլիայի ֆոնդին միջոցների ժողովարարությամբ և ՀՈՆԲ Ընկերությունը ստեղծելով: Դրանից անմիջապես հետո ստեղծվեց Գլխիական պաշտպանության և արդյունաբերության բարեկամների ընկերությունը: Հետագայում այս յերկու կազմակերպությունները, վորոնք ընդգրկել եյին յերկու միլիոն աշխատավորներ, միացան և կազմվեց մեկ ընկերություն — Ավիաքիմը:

ՊԱՋԸ-ԱՎԻԱՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ
ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Այդպիսով ՊԱՋԸ-Ավիաքիմ ընկերությունը վերջնական ձևավորումն ստացավ 1927 թվին, հունվար ամսին համամիութենական իր առաջին համագումարում: ՊԱՋԸ-Ավիաքիմը նույն խնդիրներն է իրականացնում, ինչ վոր Ավիաքիմը և ՊԱՋԸ, այսինքն՝ Խորհրդային Միության ամրացման, յերկրի ժողովրդական տնտեսություն ամրապնդման խնդիրները:

Հետո կտեսնենք, վոր առանց լայն դարգացած արդյունաբերություն չգտվար է պատերազմել: Ուրեմն՝

1) Ազգաբնակչությունը պետք է նախապատրաստել, վոր նա կարողանա ողա-քիմիական հարձակումներից պաշտպանվել:

2) Աջակցել Կարմիր Բանակին ողա-քիմիական մասսայական պաշտպանություն կազմակերպման գործում և

3) Պետական ու հասարակական հիմնարկությունների պաշտպանություն գործում լայնորեն մասնակցել:

Ի՞նչ է արված այդ 3 ուղղությամբ. հասարակական ինքնագործնեություն հիմքերով, ձեռնարկություններում, հիմնարկություններում և

հաղորդակցություն ասպարիզում ստեղծվել են հատուկ «ավիաքիմ վաշտեր», խմբեր, ստեղծվել են կրուժոկներ, վորոնք աշխատավորության լայն մասսաներում տարածում են ավիացիայի և քիմիայի վերբերյալ գիտելիքներ: Նման կրուժոկներին թիվը հազարից անցնում է:

Վերջին տարիների ընթացքում Ավիաքիմի և իր հետնորդների միջոցներով կառուցված են և հանձնվել են Կարմիր Ողանավատորմին հարյուր վաթսու և մեկ սավառնակ, տեղական ընկերությունների և կենտրոնի ջանքերով շինված են քսան ողանավակայաններ, բավական աշխատանք է տարված ավիացիայի և քիմիայի լաբորատորիաներ կազմակերպելու և Խորհրդային ավիացիային (ողագնացություն) ու քիմիայի գիտական հիմնարկներին աջակցելու և ոժանդակելու գործում:

Ավիաքիմը բավականին գործ է կատարել. մասնակցելով սոցիալիստական շինարարության, աջակցելով ավիացիոն արդյունաբերության զարգացման, նպաստել է քիմիական արդյունաբերության և գյուղատնտեսության ամրապնդման:

Հայտնի չէ, վոր հողի պարարտացման գործում կարևոր դեր են կատարում հանքային նյութերը: Ահա այդ ասպարիզում Ավիաքիմը 1926 թվին

ընթացքում 7000 ցուցադրական գյուղատնտեսական կետեր ե հիմնել՝ հանքային պարարտացման գործի տարածման նպատակով: Նա կադմակերպել ե յերկու ավիացիոն-քիմիական եքսպեդիցիա՝ մորեխը վոչնչացնելու համար: Այդպիսով 10.000 դեսյատին տարածությամբ վարելահող փրկել ե մորեխից, 700 դեսյատին անտառ փրկել ե փնսսատու միջատներից, այդ գործում մեծ են նրա կատարած ծառայությունները:

Գյուղացիները տեսնելով այդ գյուղատնտեսական ցուցադրական կայանների տված հսկայական ոգուտը, սովորացնում են իրենց շաբերը, և այսօր մենք քիմիական արդյունաբերության զարգացման ասպարիզում առաջ ենք քաշել տասնյակ միլիոն գյուղացիների:

Խորհրդային Միության անգամ ամենախուլ անկյուններում հիմնադրված և հիմնադրվող բազմաթիվ ելեքտրոկայաններ մոտ ապագայում ուժեղ թափով բարձրացնելու յեն մեր յերկրի քիմիական արդյունաբերությունը:


Ավիաքիմիկն գուգնթաց 1926 թ. սկսեց լայն ծավալել իր գործը ԽՍՀՄ Պաշտպանության Աջակցության Ընկերությունը (ՊԱՋԸ), վոր գուրս ե յեկել Կարմիր Բանակի ծոցից, և կանգնել ե խորհրդային հասարակականության

ուղիների վրա: Իր գոյության մի քանի ամիսների ընթացքում նա արդեն շահել ե 300.000 աշխատավոր անդամ, մեծ հաջողության ե հասել նշանաձիգ մարզի ասպարիզում, բանվորա-գյուղացիական լայն խավերում ռազմական գիտություններ տարածելով և Միության պաշտպանության գործի լայն պրոպագանդ մղելով:

Այժմ այդ նախկին յերկու ընկերություններից միացյալ ՊԱՋԸ-Ավիաքիմ ընկերությունը հնարավորություն ստացավ ուժերը խնայելու, միասնական Ընկերության մեջ միացնելով յերկու կազմակերպության աշխատանքները և միջոցները, դյուրացնելով կարևոր խնդիրների շուտափույթ լուծման գործը այս որերին, յերբ մենք կանգնած ենք մեզ վրա հարձակվելու վտանգի առաջ:

Համարձակ պետք ե ասել, վոր այն նվաճումները, վորոնց վրա մենք արդեն մատնացույց արինք, յերբեք բավական չեն և չեն կարող բավարարել այս ըոպեյին, յերբ մեր թշնամիները գլխապատռ աշխատում են իրենց ուժերն ավելացնել: Յերկուս ու կես միլիոն անդամը, — քիչ ե. տասնյակ միլիոնների պետք ե հասցնենք պաշտպանության բարեկամների թիվը. դրա համեմատ ել պետք ե ավելացնենք մեր ավիաքիմ կրուժոկների, կամավոր վաշտերի, հրացանաձիգ

Ի՞նչ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՍՏԱՆԱԼ ԱՂԻՑ ՅԵՎ ՔԱՐԱԾՈՒԽԻՑ, ՅԵԹԵ ՈՒՆԻՆՔ ԼԱՅՆ ԶԱՐԳԱՅԱԾ ՔԻՄԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ.



^{*)} Յերկրորդ պայմանական նշանի բացատրությունը պետք է կարդալ— «Նյութեր, վորոնք գործադրվում են և՛ պատերազմի և՛ խաղաղ ժամանակ»:

խմբակների և մյուս կամավոր ընկերությունների քանակը, քանի վոր այդ ե պահանջում միջազգային դրությունը:

«Ուլտիմատում»-ին հետևեց «Մեր պատասխանը Ձեմբեուլենին», և այս ֆոնդը աճում ե ու ամրանում՝ շնորհիվ բանվորա-գյուղացիական մասսաների խանդավառություն:

Մոսկվայի Խորհրդի նիստում ընկ. Ռիկովը հայտարարեց, վոր ի պատասխան Ձեմբեուլենին այժմ, ավելի քան միլիարդ, մեծ ուշադրություն պետք ե դարձնել այն խնդիրների վրա, վորոնք կապված են խորհրդային պետության սահմանների պաշտպանության հետ:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ՝ ԱՐԹՈՒՆ ՊԱՀԱՊԱՆ

Ինչ վերաբերում ե մեր սահմանների հավատարիմ պահպանին՝ Կարմիր Բանակին, մենք կարող ենք առաջացող պատերազմի վտանգի դիմաց վստահ լինել, վոր հանձինս Կարմիր Բանակի մենք մեր խորհրդային սահմանների սրատես պահպանն ունենք: Նա ներկայումս քաղաքականապես և ժամանակակից ռազմական տակտիկայի պահանջների համաձայն լավ դատարարված ու վարժված ե: Հրամանատարական կազմը զգալի աճել ե և իր բարձրության վրա յե կա՛ գնած:

Մեր Կարմիր Բանակը բաղկացած ե ընդամենը 562.000 մարդուց: Ուրեմն ամեն մի բանվոր ու գյուղացի, վոր մտածում ե յերկրի պաշտպանության մասին, չի կարող չհոգալ՝ պատերազմի դեպքում վարժված ու մարզված մարդկային ռեզերվի (զապաս, պահեստ) մասին: Յեվ այս ասպարիզում այժմ, շնորհիվ Ռադմա-Հեղափոխական Խորհրդի և նրա նախագահ ընկ. Վորոշիլովի անշեղ ու ճիշտ ղեկավարություն, մեր յերկրային-միլիցիոն զորամասերը՝ Կարմիր Բանակի մարդկային պահեստի զլխավոր մասսան բավական ամրապնդվել ե և հաջողությամբ տանում ե զինվորական ու քաղաքական նախապատրաստության աշխատանքներ:

Այսպիսով պատերազմի փոթորկալից օրերին, միլիոնավոր բանվորներ ու գյուղացիներ Կարմիր Բանակի ռազմական դրոշների տակ կանչելով, կատարելապես զինված կլինեն, մեզ համար ապահովելով «հաղթություն առանց շատ արյուն թափելու»:


Պատերազմական և զինվորական տեխնիկան զարգանում ե և աճում յերկրի ամբողջ տնտեսության առաջադիմության հետ միասին, նրա ինդուստրացման հետ զուգընթաց և նրա տեխնիքական կուլտուրայի բարձրացմամբ:

Այժմ ծանոթանանք ԽՍՀՄ-ն զինվորական ուժերի տեխնիկայի հիմնական բնագավառներին:

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՒՍՆԱՎԱՏՈՐՄԸ

Համաշխարհային և քաղաքացիական պատերազմից հետո, կարմիր Բանակի ունեցած ողանավատորմն այնքան փոքրիկ էր, վոր չեր բավականացնում Խորհրդային Միությունը պաշտպանելու համար:

ՈՒՍՅՈՒՆ ՆԱՎԱՏՈՐՄԻ ԱՃՈՒՄԸ



1920 թ. վերջին ելքի մեկ միավոր

Ցարական Ռուսաստանի ողանավատորմի համար այբրողաններ և մատորներ գնվում էին մեծ մասամբ արտասահմանից:

Վերջին 2-3 տարում բավական զարգացավ խորհրդային ավիացիոն արդյունաբերությունը և ուժեղացավ կարմիր ողանավատորմը:

Քաղաքացիական կռից մնացած սակավաթիվ հնացած այբրողանների տեղ մեր Միությունը ներկայումս ուժեղ ողային նավատորմ ունի՝ թե քանակով և թե վորակով բարձր:

Համեմատած 1923 թվի հետ, 25/26 թվին այբրողանների թիվը յերեք ու կես անգամ աճել է, իսկ մատորներինը—մոտ 6 անգամ:

Մենք այժմ ունենք խորհրդային մասնագետների ձեռքով և մեր գործարաններում շինած մատորներ, վորոնք մրցում են արտասահմանյան մատորների ամենալավ տեսակների հետ:

Այդ ուղղությամբ գիտական շինարարական աշխատանքը մեկ ընդհանուր ղեկավար ունի, այն է՝ Ժողովրդական Տնտեսության Գերագույն Խորհուրդը, մինչդեռ արտասահմանում զանազան ձեռնարկություններ առանձին-առանձին իրար դեմ մրցում են:

Մեզ մոտ կան մի շարք գիտական հիմնարկություններ, վորոնց նմանը Յեվրոպան չունի, և մեզ մոտ նորանոր փորձեր և գյուտեր են կատարվում ավիացիոն շինարարության և այբրողանային մատորների նոր տեսակներ մշակելու բնագավառում:

Իսկ վորտեղ են պատրաստվում մեր ողաչուները, մոտորիստները: Դրա համար կա հատուկ բարձրագույն դպրոց—Ռազմական Ողային-Ակա-

դեմիան, վոր լավ վարժված ու մարդված ողա-
չուններ ե տալիս: Մեր խորհրդային հերոս պիլոտ-
ները վերջին տարիները մի շարք բացառիկ զըժ-
վար թռիչքներ են կատարել, ինչպես՝ Մոսկվա-
Պեկին՝ 1925 թվ., Մոսկվա - Անգորա (Սև ծովով)՝
ցամաքային սավառնակով՝ 1926 թ., Մոսկվա-
Թեհրան և կրկին յետ, և վերջապես ողաչու Գրո-
մովի նշանավոր յերեքորյա շրջապտույտ թռիչքը
Ֆեվրոպայի շուրջը «Պրոլետարիյ» այբրուպլանով,
վոր մեծ գովասանքի արժանացավ Ֆեվրոպայում:

Այդ թռիչքներում մեր ողաչունները ցուցա-
դրեցին իրենց գործի հմտութունը, վճռակա-
նութունն ու արիութունը, վորով նրանք Ֆեվ-
րոպայի ու Ամերիկայի ամենալավ թռչողներեց
յետ չեն մնում:

Այժմ այբրուպլանների դերը ավելի յե մեծա-
նում, քանի վոր պատերազմը մղվելու յե ողում,
և այն պետութունը, վորն ողում հաղթեց, ցա-
մաքում անկասկած ե վոր կհաղթե:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԻՄԻԱՆ

Ժամանակակից պատերազմում քիմիայի դերը
շատ մեծ ե: Հայտնի յե, վոր խաղաղ շրջանի
քիմիական արդյունաբերութունը հանդիսանում
ե քիմիական ինքնապաշտպանության հիմքը, քանի
վոր քիմ-պատերազմին անհրաժեշտ նյութերը

հարանման են այն նյութերին, վորոնք պատ-
րաստվում են քիմիական արդյունաբերության
մեջ և գործադրվում են խաղաղ նպատակների
համար: Հաճախ թե մեկը և թե մյուսը նույն բանն
են ներկայացնում: Որինակի համար հիշենք մի
քանի նյութեր:

Այսպես՝ հայտնի խլոր գազը, վոր պատերազ-
մական թունավորող նյութերի մեծ մասի մեջ
ե պարունակվում և ծառայում ե իպրիտ և լյուի-
զիտ թունավորող նյութեր պատրաստելու հա-
մար, մեծապես գործադրվում ե ներկեր պատ-
րաստող արդյունաբերության մեջ, որինակ՝ ին-
դիգո ներկի: Նույն խլորը գործադրվում ե նաև
ջուրը մաքրելու, այլ և գաշտային մկները վոչնչա-
ցնելու համար:

Մի այլ թունավորող նյութ՝ ֆոսգեն, վոր մեծ
դեր խաղաց անցած պատերազմում, ծառայում ե
իբրև վառ-կարմիր, կապույտ և մանիշակագույն
ներկեր պատրաստող նյութ:

Մկնդեղային թունավոր նյութերը՝ արսին-
ները պատրաստվում են այն հում նյութերից,
ինչ վոր սիֆիլիսի դեմ կարևորագույն դեղը՝
սալվարսանը: Նույն նյութից ե պատրաստվում
մորեխը վոչնչացնող թունը:

Ներկերի արդյունաբերութունը մեծ մասամբ
սերտ կապված ե արդյունաբերության այլ

ճյուղերի հետ: Նա կախված է, որինակ, քարածուխի արտահանումից: Քարածուխից ճյուղ են քաշում (ճիշտ այնպես, ինչպես «ճաճ»-ից արաղ են քաշում, միայն թե առաջինը այլ կերպ են քաշում, վորին ռուսերեն ասում են сухая перегонка): Ջյուլից ել պատրաստում են այնպիսի նյութեր, վորից արտադրում են ներկեր, պայթուցիկ նյութեր, դեղորայք, ռծանելիք (դուխի), լուսանկարչական և թունավոր նյութեր, ինչպես՝ բենզոլ, տոլուոլ, նաֆթալին, անտրացեն, ֆինոլ, կսիլոն, մետիլեն-տրացեն, կրիզոլ, կարբազոլ և ֆենանտրեն: Ներկերի արդյունաբերությունը կախումն ունի աղից և նրա բաղադրիչ մասերից՝ խլորից և նատրիումից: Իսկ խլորը, ինչպես ասացինք, խոշոր և ելական դեր է կատարում ինչպես ներկերի, նույնպես և պատերազմական թունավոր նյութերի արտադրություն մեջ: (Տես նկարը):

Այսպիսով մենք տեսնում ենք, վոր ներկերի լավ զարգացած արդյունաբերությունը քիմիական պատերազմի նյութերի իսկական զինամթերանոցն է հանդիսանում. քիմիական այդ ռազմանյութերը, հարկավոր դեպքում, կարող են յերկրի պաշտպանության հիմքը լինել:

Մինչ իմպերիալիստական պատերազմը՝ 1914 — 1918 թ. թ., ներկերի արդյունաբերության մենա-

շնորհների տերը Գերմանիան էր: Ցարական Ռուսաստանը միմիայն Գերմանիայից 10 միլիոն վոսկի ռուբլու ներկեր եր ներմուծում:

Նկատենք նաև այն, վոր ներկերի արդյունաբերություն, դեղորայքի արտադրություն, հետևապես և ռազմա-քիմիական արդյունաբերության համար հում նյութերի մի հսկայական աղբյուր է հանդիսանում նավթը, վորը լիովին կարող է փոխարինել քարածուխին (յեթե նավթը վերամշակենք):

Այժմ խոսենք քիմիական արդյունաբերության մի ուրիշ ճյուղի մասին. դա հանքային պարատանյութերն են: Ի՞նչ է պահանջվում, վոր մեր հողը լավ բերք տա կամ բույսը լավ աճեցնի, — ֆոսֆոր, բորակ-ազոտ և կալիոն. այս նյութերը անհրաժեշտ են հողի պարարտացման համար և առանձնապես հարկավոր են բերքի առատության համար: Ռուսաստանը 1913 թվին արտասահմանից ներմուծել է 34 միլիոն փութ հանքային պարարտանյութեր, վորոնց թվում և ազոտային նյութեր: Իսկ ռազմագործել է ընդամենը 44^{1/2} միլիոն փութ. ուրեմն, յերկրի ներսում միայն 10^{1/2} միլիոն փութ է արտադրել, պատրաստել: Մեկ դեպյատինի վրա գործածած 0,1 կիլո ազոտային պարարտանյութը միջին թվով այն ժամանակներում տալիս էր մոտ

59 փութ հացահատիկ՝ մեկ դեպյատինից:

Մինչդեռ միևնույն ժամանակ Գերմանիայում մի դեպյատինի մեջ մտցնելով 30 կիլո ազոտային պարարտանյութեր, բերքի քանակը հասցրին մինչև 106 փթի՝ մի դեպյատինից: Հանքային պարարտացման նյութերի արդյունաբերության լայն զարգացմամբ մենք կստանանք մեզ անհրաժեշտ պարարտանյութերը, իսկ պատերազմի դեպքում այդ նույն քիմիա-արդյունաբերության ճյուղը մեզ կտար ֆոսֆոր-լուսածին թունավոր նյութը, վոր մեծ դեր է կատարում «քիմիական պատերազմում»:

Վերջապես քիմիական արդյունաբերության չորրորդ բնագավառը, դա փայտի քիմիական վերամշակությունն է, վոր նույնպես մեծ դեր է կատարում քիմիական պատերազմում:

Ձանազան տեսակի ծառերի փայտից զանազան նյութեր ենք ստանում. որինակ՝ քացիսա-թթվուտ, խեժ, կանիֆոլ, սկիպիդար, յեթերայուղեր, ինչպես նաև մետիլային սպիրտ, ացետոն, ածուխ: Մետիլային սպիրտը և ացետոնը թունավորիչ նյութերի արտադրության համար են անհրաժեշտ, իսկ ածուխը հրաշալի հակաթույն է հանդիսանում, վորովհետև նա թույնը կլանում է և գործ էածվում իբրև հակազգ:

Մեր յերկիրը քիմիական հում նյութերի ան-

պասռ պահեստ է: Մենք մեր յերկրի ներսում ունենք ամեն ինչ, վոր անհրաժեշտ է քիմիական հաջող պաշտպանության համար:


Ինչ վերաբերում է «ռազմական քիմիային», պետք է ասենք, վոր մեր Կարմիր Բանակը իր պատրաստականությունը բարձրացրել է թե ռազմական հարվածային խնդիրների լուծման և թե քիմիական ինքնապաշտպանության ճյուղերում: Արդեն լայնորեն տարածված են այն լաբորատորիաները, վորտեղ գիտական ուսումնասիրության և կառուցողական աշխատանքներ են տարվում: Մենք պատրաստել ենք յեվ ընդունել Կարմիր Բանակը զինելու համար՝ ուժեղ խորհրդային-հակազգ, վոր պաշտպանում է մինչև վ որս հայտնի այն բոլոր թունավոր նյութերից, վոր իմպերիալիստները հնարել են:

ԽՍՀՄ ՆԱՎԱՏՈՐՄԸ


Ներկայումս Խորհրդային Միության ծովային ռազմանավատորմը իրենից մի այնպիսի ուժ է ներկայացնում, վոր ի վիճակի յե լուծել այն խոշոր ու բարդ խնդիրները, վորոնք դրված են նրա առաջ՝ Միության բանվ.-գյուղացիական կառավարության կողմից, այսինքն՝ մեր սահմանների պաշտպանության խնդիրները:

Մեր նավատորմի ուժը վոչ թե սոսկ քա-

նակի մեջ է, այլ և մեր ռազմա-ծովային կազմակերպության ձևի, վորակի մեջ: Մեր յերկրի բանվորներն ու գյուղացիները պետք է իմանան, վոր Բալթիկ և Սև ծովերում մեր նավատորմը ամենաուժեղն է նայել իր քանակով:
 ԽՍՀՄ ՅԵՎ. ՀԱՐԵՎԱՆ ՅԵՐԿՐՆԵՐԻ ՆԱՎԱՏՈՐՄՆԵՐԻ ՏՈՆՆԱԺԸ ՀԱՉԱՐ ՏՈՆՆԵՐՈՎ)



Բալթիկ ծովում.—Վերևինը՝ ԽՍՀՄ նավատորմը, ներքևինը՝ Ֆինլանդիայի, Եստոնիայի, Լատվիայի և Լեհաստանի նավատորմների հարաբերական մեծությունները:



Սեւ ծովում.—ԽՍՀՄ (28), Տաճկաստանի (24) և Ռումինիայի (6) նավատորմների հարաբերական մեծությունները:

Այսպես՝ Ֆինլանդիայի, Եստոնիայի, Լատվիայի, և Լեհաստանի նավատորմի տոննաժը (տարողությունը, պարունակությունը) Բալթիկ ծովում կազմում է 12.000 տոննա*), մինչդեռ մեր նավատու մինը՝ 111.000 տոննա:

*) 1 տոննա $\approx$ 1000 կիլոգրամ կամ $61\frac{1}{2}$ փուխ:

Սև ծովում հետևյալ թվական հարաբերությունն ունենք. Ռումինիայի նավատորմն ունի 6.000 տոննա, Տաճկաստանինը՝ 24.000, ԽՍՀՄ-ն Սև ծովյան նավատորմի տոննաժն է՝ 28.000:

Մեր նավատորմը որեցոր բարելավվում է, վերանորոգվում, նրա տեխնիքական դրությունը բավարար է և ներկայումս նա ապահովված է ռազմունակության համար անհրաժեշտ նյութական մասերով ու միանգամայն ընդունակ է թշնամու քիմիական հարձակումները յետ մղելու:

Նավատորմի անձնական կազմը, վոր բաղկացած է 29, 39% բանվորներից և 60,47% գյուղացիներից, հատուկ ծրագրով ռազմական լուրջ պատրաստություն է ստանում: Ամեն տարի կազմակերպվող մանյովրները նորանոր ապացույցներ են տալիս, վոր մեր Կարմիր-Նավատորմը ավելի ու ավելի յե ուժեղանում ու կատարելագործում իր պատերազմական ունակությունը:

Նավատորմի անձնական կազմի ուժեղացման և ամրացման գործում մեծ դեր է կատարում կոմյերիտամիությունը, վորը 1922 թվին նավատորմի շեֆությունն իր վրա առավ և հերթական զինակոչներին տարեկան 10.000 կոմսոմոլիստ եր տալիս: Նավատորմի հրամկազմի ղարոցների ցանցը՝ Ռազմա-Ծովային Ակադե-

միայն գլխավորութեամբ, լիովին բավարար ե գործում և նավատորմին տալիս ե լավ պատ-
րաստված հրամանատարներ ու մասնագետներ՝
զանազան կվալիֆիկացիայի:

ԽՍՀՄ Խորհուրդների IV-րդ համագումարին
մեր ռազմա-ծովային ժողովրդական կոմիսարիա-
տը իր զեկուցման մեջ նշեց, վոր ծովային նավա-
տորմը ինքնապաշտպանութեան համար թանգար-
ժեք միջոց ե և նրա ուժեղացման համար յեր-
կարատե ժամանակ ու ահագին զբաժանական ծախ-
սեր են պահանջվում:

Սակայն ներկայիս Կարմիր Նավատորմը մեծ
խոչընդոտ կլինի մեր այն թշնամիների համար,
վորոնք կմտածեն մեր դեմ հարձակվել ծովից:

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐԻ, ԳՅՈՒՂԱՅԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ,
ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՈՒ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼի-
ԳԵՆՏԵՐԻ, ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻ ՅԵՎ ԳԵՂՋԿՈՒ-
ՀԻՆԵՐԻ ԱՌԱՋ ԴՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ընթերցողներին մենք ծանոթացրինք մեր
պատերազմական ույժերի կազմի, զրուլթյան և
վորակի ու քանակի հետ: Այժմ խոսենք այն
մասին, թե ի՞նչ ե մեր աշխատավոր մասնաների
անելիքը մեր յերկրի ռազմունակութեանը բար-
ձրացնելու ասպարիգում:

Ամեն մի բանվոր, իրրե մեր յերկրի աշխա-

տավորութեան ավանգարդ՝ պետք ե սովորի
հրացան բռնել ու գործածել, իր արտադրու-
թյունը արագ կերպով դարձնել զինվորական
կարիքների համար, պետք ե նա կարողանա պաշտ-
պանել գործարաններն ու արհեստանոցները
ինչպես ցամաքային, նույնպես և ողային-քիմի-
ական հարձակումներից: Իրենց արտադրութեան
պայմաններում, խորհրդային մետաղագործները,
քիմիկոսները, ճանապարհների հաղորդակցու-
թյան աշխատողները, մանվածագործները, լեռ-
նահանքի բանվորները, պոստի, հեռագրատան,
հեռախոսի, ռադիոյի, քաղաքացիական ավիա-
ցիայի (ողադնացութեան) և այլ տեխնիքական
տնտեսական ու գիտական հիմնարկութեանների
ծառայողները, բանվորները, տեխնիկները, ին-
ժեներները պետք ե ԽՍՀՄ-ն պաշտպանութեան
համար գործել իմանան և աշխատանքի մեծ
բանակի հավատարիմ զինվորները լինեն:

Պրոլետարներն են, վոր հսկելու յին մեր պե-
տութեան հրամանատարական բարձունքները.
վոչ վոք չպետք ե մոռանա, վոր իմպերիա-
լիստները հարձակումների սկզբում պետք ե
փորձեն քանդել ու վոչնչացնել մեր գործադան-
ները, կամուրջները, տեխնիքական շէնքերը,
ելեկտրոկայանները և այլն: Միշտ պետք ե
նկատի ունենալ լրտեսներին, դավաճաննե-

րին, սպիտակ գվարդիական սրիկաներին, վո-
րոնք պատրաստ են ծախել իրենց յերկիրը և
իրենց ժողովուրդը մի տասնյակ դոլարով, ֆրան-
կով և այլն:

Սովորել պաշտպանել խորհրդային յերկիրն
ու հողը, վորը Հոկտեմբերյան Հեղափոխությամբ
ենք նվաճել. ահա այս խնդիրն է, վոր դրված է
բազմամիլիոն աշխատավոր գյուղացիների առաջ:

Պահեստի կարմիր-բանակայինները չպետք է
մոռանան և պետք է վերհիշեն իրենց սովորած-
ներն ու իրենց հերթին սովորեցնեն իրենց ըն-
կերներին. նախազինակոչայինները պետք է գի-
տակցորեն ու բարեխիղճ կերպով վերաբերվեն
ու յուրացնեն այն բոլորը, վոր կարճ ժամանա-
կում նրանց տալիս են. նրանք շարունակ պետք
է աշխատեն ՊԱՋԸ-Ավիաքիմի շարքերում: Յեր-
կրային զորամասերի զինվորները — կարմիր Բա-
նակի մարտիկները իրենց ապրած վայրերում,
հասարակական աշխատանքների մեջ պետք է
հրամանատարությանը գիտակից աջակցություն
ցույց տան իրենց ռազմական պատրաստու-
թյամբ և ամենքի մեջ պետք է խորհրդային
պետության համար կռվելու անհրաժեշտության
գիտակցություն ստեղծեն: Մարտիկի վորակի
բարձրացումը, — ահա նախազինակոչայինների
լոգունգը:

Գյուղացիները պետք է աշխուրջ հսկեն, վոր
իրենց խորհուրդներում կռակներ ներս չխու-
ժեն. գյուղացիները պետք է աջակցեն յեր-
կաթուղիների կամուրջների, հեռագրային ու
հեռախոսային գծերի, հասարակական ռադիո-
ընդունարանների, ելեկտրական գծերի, հարեան
ձեռնարկությունների և պետական շենքերի պահ-
պանության գործին: Յեթե խորհրդային Միու-
թյան ամբողջ 146 միլիոն բանվորա-գյուղացիա-
կան ազգաբնակչությունը աչքի լույսի պես պահ-
պանի յերկրի տնտեսությունն ու տեխնիքական
միջոցները, ապա հատ ու կենդ դավաճաններն
ու սրիկաները, մեր յերկրից վոնդված, հացից
ու ջրից զրկված, ինչպես կատաղած շներ, ան-
վտանգ կդարձվեն ու կվոչնչացվեն հեղափոխա-
կան որենքի դաժան ձեռքով: Սրանով իսկ թե-
թեացած կլինի կարմիր Բանակի պայքարը առ-
տաքին ֆրոնտում:

Իսկ բարձրագույն դպրոցների ուսանողները,
բժշկական և սանիտարական կազմը, ինժեներ-
ները, տեխնիկները, ուսուցչությունը, ամբողջ
խորհրդային ազնիվ աշխատավոր ինտելիգեն-
ցիան, պահեստի հրամանատարական կազմը
իրենց պետք է նախապատրաստեն կարմիր Բա-
նակի վորակյալ մարտիկների կամ յերկրի պաշտ-
պանության վորակյալ վարպետների դերի համար:

Խորհրդային Միության ազգաբնակչության կեսը կազմում են կին-բանվորուհիները և գեղջ-կուհիները: Առանց նրանց ակափով ոգնություն չի կարելի սոցիալիստական հիմքերով նոր հասարակություն ստեղծել, չի կարելի անել ու դաստիարակել ապագա մարդկության նոր սերունդը, առանց նրանց չի կարելի նաև կառուցել Միության պաշտպանության գործը: Պետք է սովորեցնել բանվորուհուն յեվ գեղջկուհուն՝ փոխարինել իրենց ամուսիններին, յեղբայրներին և դազգահի ընկերոջ, պետք է սովորեցնել գեղջկուհուն՝ փոխարինել տղամարդուն, նրա գործը կատարել արտում, դաշտում, արակտորի վրա, դպրոցում և խորհրդում, պետք է թիկունքային գինվորական վարչություններում ստեղծել կին աշխատողների, կին ծառայողների կադր, մանավանդ սանիտարական խմբեր, վորոնք իմանան թունավոր նյութերի քայքայիչ գործնելություն գեմ կռվել—այս ել պակաս խնդիրներից չե, քան այն, ինչ դրված է գինակոչայինների առաջ:

Այս գործնելությունը ապահովելով, կապահովենք հաղթանակը և կարմիր-Բանակը կհաղթանակի թե՛ ռազմական ճակատում և թե՛ համաշխարհային պրոլետարական հեղափոխության ճակատում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ ԱՆՊԱՐՏԵԼԻ ՅԵՎ ԱՆԸՆԿՃԵԼԻ ԴԱՐՁՆԵՐ

Մենք ծանոթացանք մեր «քաղաքակիրթ» հակառակորդներին՝ խոսքով գինաթափվող, իսկ գործով սպառազինվող քաղաքականությունը: Ընթերցողները և լսողները տեսան այն կատաղի ատելությունը, վոր համաշխարհային բուրժուազիան տածում է դեպի մեզ՝ արդեն հայտնի պատճառներով: Մենք տեսանք, վոր պրոլետարական դիկտատուրայի յերկիրը կանգնած է պատերազմի, վտանգի առաջ, վոր բացաշկարա պատրաստում են իմպերիալիստները:

Ամեն մի բանվոր ու գյուղացի պետք է ըմբռնի, թե իրենց ինչ վիճակ է սպասվում անգլիական իմպերիալիզմի հաղթանակից հետո, նրա ձեռքով պատրաստվող այս առաջիկա պատերազմից հետո:

Բանվորների համար՝ նրա այդ հաղթանակը կնշանակեր—վերադարձնել ֆաբրիկները հին տերերին, վորոնք յերկրից դուրս են վռնդված—Րյաբուշկինսկիներին, Բալֆուրներին, Ուրկվարտներին. այդ հաղթանակը կնշանակեր—որական 8 ժամ աշխատելու փոխարեն աշխատել կրկնակի և այն ել՝ տաժանակիր պայմաններում:

Գյուղացիների համար՝ այդ տեսակ հաղթանակը կնշանակեր վորչայլ ինչ, յեթե վոչ կալվածատերերի, խաների, կնյաղների դաժան լծի վերականգնումը,

հողերի վերադարձը կալվածատերերին և սրանց պատժիչ զորամասերի ու խմբերի ալան-թալաններն ու բռնությունները: ԽՍՀՄ-ն մեջ բնակվող ազգերի համար այդ հաղթությունը կհասցնե՞ր հին ցարական կառավարության՝ դեպի «այլազգիները» ունեցած քաղաքականությանը, անորինությունների և ճնշումների քաղաքականությանը:

Բայց մենք տեսանք, վոր Խորհուրդների Հանրապետությունը իր գոյության տասերորդ տարում տակավին անոգնական չէ: Բացի այն, վոր իր թշնամիների թիկունքում ԽՍՀՄ, հանձինս աշխատավորների, ունի միլիոնավոր բարեկամներ, — Հոկտեմբերյան ծնունդ կարմիր Բանակը, մեր ծովային և ոգային նավատորմները իրենց տեխնիքական միջոցներով՝ պատրաստ, աչալուրջ ու արթուն կանգնած են Միության սահմանների պաշտպանության համար:

Կարմիր Բանակի վիճակը վոչ միայն վորեն յերկյուղի առիթ չի տալիս, այլ մեզ համոզում է, վոր առաջիկա պայքարից մենք, անկասկած, հաղթանակով դուրս կգանք:

Այս հավատն ու համոզմունքը ավելի ուժեղանում է, քանի հաստատ ու վճռական է հնչում բանվորա-գյուղացիական բաղամիլիոն մասսաների ձայնը — «Պատերազմ չենք ուզում, բայց դիմադրելու պատրաստ ենք»:

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0048323

ԳԻՆԸ 10 Կ.



Я. АВИНОВИЦКИЙ и В. ЗАРЗАР

**ВОЙНЫ НЕ ХОТИМ,
НО К ОТПОРУ ГОТОВЫ**

На армянском языке

Центральное Издательство Народов Союза ССР.
Москва, Никольская 10.